ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հերթական ատեստավորման ենթակա ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԴԱՆԻԵԼ ԵՐՎԱՆԴԻ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՏԵՍԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Հետազոտական աշխատանք

Ղեկավար՝ Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2022

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդիականություն: Ազատ շուկայական հարաբերություններին անցնելու արդյունքում սկզբունքորեն փոխվել են աշխատանքային հարաբերությունների բնույթը, աշխատաշուկայի կարգավորման սկզբունքներն ու մեխանիզմները, ինչպես նաև աշխատաշուկայում պահանջարկի և առաջարկի ձևավորման օրինաչափությունները: Մասնագիտությունների ու զբաղմունքների ոլորտը դարձել է առավել դինամիկ, բազմագործոն և դժվար կանխատեսելի, արդյունավետ չի գործում մասնագետների պատրաստման պետական պատվերի համակարգը, ինչի հետևանքով Հայաստանի աշխատաշուկայում առկա է որակական և քանակական քրոնիկ անհավասարակշռություն, որն արտահայտվում է գործազրկության բարձր իրական մակարդակով, որոշ մասնագիտությունների գծով՝ կադրերի գերարտադրությամբ և որոշ դեպքերում՝ պահանջարկ ունեցող մասնագետների պակասուրդով: Թույլ է աշխատաշուկայի և կրթական համակարգի փոխադարձ կապը: Այս համատեքստում, որպես բնակչության զբաղվածության, աշխատաշուկայի արդյունավետ հավասարակշռության երկարաժամկետ ապահովման հեռանկարային միջոց, մեծ նշանակություն է ստանում մասնագիտական կողմնորոշումը, որը պետք է հիմնված լինի անհատի մասնագիտական նախընտրությունների ձևավորման հիմնական գործոնների ամբողջության և դրանք իրականացնելու ուղիների բազմակողմանի հաշվառման վրա:

Հայաստանում մասնագիտական կողմնորոշման գործուն և կայացած համակարգ երբևէ չի եղել, թերևս՝ միայն խորհրդային տարիներին գործող համակարգը, որն ավելի շատ իմիտացիոն, ձևական բնույթ ուներ, հիմնականում՝ ճանաչողական, խիստ գաղափարականացված էր և քիչ եզրեր ուներ աշխատաշուկայի հետ:

Հայաստանի անկախացումից հետո երկրում տեղի ունեցած համակարգային փոփոխությունների շնորհիվ ձևավորվող շուկայական հարաբերությունները, առողջապահության, կրթության, սոցիալական պաշտպանության, մշակութի ու հոգևոր ոլորտներում գաղափարախոսական նոր մոտեցումներն ու գործելակերպը էապես խաթարեցին նաև մասնագիտական կողմնորոշման խորհրդային համակարգը: Հին համակարգը դադարեց գործելուց, իսկ նորը, որպես այդպիսին, չստեղծվեց:

Փաստորեն, և խորհրդային տարիներին, և Հայաստանի նորանկախ պետության ժամանակներում պատանիների ու երիտասարդների կողմից մասնագիտության ու զբաղմունքի ընտրությունը կրել է խիստ տարերային, հախուռն բնույթ՝ հիմնականում պայմանավորված լինելով մի շարք հանգամանքներով:

Որպես կանոն, հաշվի առնելով հայկական ընտանիքի բազմադարյա ավանդույթները, ներընտանեկան, միջանձնային հարաբերությունների որակն ու առանձնահատկությունները՝ երեխաների մասնագիտության ընտրության հարցում վճռորոշ է եղել ընտանիքի ավագների, մասնավորապես՝ ծնողների կարծիքը, ովքեր առանձին դեպքերում առաջնորդվել են սեփական նախասիրություններով, առկա նյութական հնարավորություններով, կամ տուրք են տվել ժամանակի գերիշխող մոդային: Որոշակի նշանակություն է ունեցել նաև ծնողների մասնագիտական ավանդույթները շարունակելը՝ պայմանավորված գենետիկ հակումներով: Դեր է ունեցել շրջապատի, ընկերների կարծիքները, նաև՝ պատահականությունն ու դիպվածը: Քիչ տեղ է մնացել մասնագիտության գիտակցված ընտրությանը:

Դպրոցականների դրդապատճառայինոլորտի ձևավորման մեջ գլխավորն այն չէ, որ նրանք ձևականորեն յուրացնեն հասարակության պահանջներում ամփոփված բարոյական արժեքները, նորմերը ու վարքի կանոնները, այլ այդ պահանջների, նորմերի և կանոնների գիտակցումը, դրանց հիման վրա՝ յուրաքանչյուր դպրոցականի իր ապագայի հանդեպ սոցիալական ակտիվությունը, գործնական դիրքորոշումն ապահովող անհատական համոզմունքի ձևավորումը: Եվ այսպես, միայն ձևավորված պահանջմունքի առկայությունը կոնկրետ գործունեության, կոնկրետ աշխատանքի ձևի յուրացման համար մասնագիտության ընտրությունը դարձնում է մոտիվացիոն և ձևավորում մասնագիտության գիտակցական ընտրության մեխանիզմ {36}:

Հանրակրթության ոլորտում իրականացվող շարունակական և լայնածավալ բարեփոխումները, ի թիվս այլ նպատակների, միտված են նաև ապահովելու շրջանավարտների՝ աշխատաշուկա մտնելու պատրաստվածությունը և իրենց հակումներին ու ընդունակություններին համապատասխան մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունը: Սակայն գործնականում այդ ուղղությամբ բավարար աշխատանքներ չեն կատարվում: Կրթական ծրագրերով նախատեսված չեն դասընթացներ, որոնք աշակերտներին կուղղորդեն դեպի աշխատաշուկա, նրանց կօժտեն

կարիերայում հաջողություններ ունենալու համար անհրաժեշտ նախնական կարողություններով:

Այն պատանիները, ովքեր ստանում են լրիվ (միջնակարգ) կրթություն, նրանք հոգեբանորեն ավելի լավ են պատրաստվում հետագայի համար: Նրանք հասկանում են, որ իրենց հետագա հաջողությունը կախված է մասնագիտության ճիշտ ընտրության հետ: Այսպիսով, պատանիները ու աղջիկները անցնում են ապագա մասնագիտության գիտակցված կամ անգիտակից ընտրությանը, որի ժամանակ աղջիկները հիմնականում ընտրում են ստեղծագործական մասնագիտություններ, իսկ պատանիները՝ տեխնիկական: Հաջողության հիմքերը կայանում են դեռևս դպրոցում, երբ պատանին հետաքրքրվում է ինչ-որ առարկայով: Այդ իսկ պատճառով իսկզբանե պետք է դրվի ճիշտ ընտրությունը:

Մասնագիտության գիտակցված ընտրությունն ազդում է հետագա ամբողջ կյանքի վրա, որոշում ինքնադրսևորման, սոցիալականացման, պրոֆեսիոնալ աճի հաջողությունը: Արդյունավետ պրոֆեսիոնալ խորհրդատվության կազմակերպման անհրաժեշտությունն ուղղված է օգնելու դեռահասին հասարակության և անհատի պահանջներին համապատասխան մասնագիտության գիտակցված ընտրության հարցում, որն էլ մատնանշում է հիմնախնդրի **արդիականությունը**:

Կարևորելով մասնագիտության գիտակցված ընտրությունը՝ որպես ապագայում երիտասարդի զբաղվածության ապահովման հիմնական նախադրյալներից մեկը ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ է որոշել V-IX դասարանի աշակերտների պրոֆեսիոնալ կողմնորոշման մակարդակը «Ֆիզիկական կուլտուրա և սպորտե մասնագիտությունից:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Նպատակի իրագործման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. Բացահայտել V-IX դասարանի աշակերտների հետաքրքրության մակարդակը ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտից:
2. Պարզաբանել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վերաբերյալ V-IX դասարանի աշակերտների տեղեկատվության աղբյուրները:
3. Ուսումնասիրել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտից մասնագիտության ընտրության դրդապատճառները V-IX դասարանի աշակերտների մոտ:

Մասնագիտական կողմնորոշումը որպես անձի սոցիալականացման օրինաչափ երևույթ

Ներկայումս Հայաստանում, մասնագիտական կողմնորոշման համակարգի և համապատասխան ծառայություններ մատուցող մասնագետների բացակայությամբ պայմանավորված, մի կողմից շուկայամետ մասնագիտությունների նկատմամբ երիտասարդների հետաքրքրությունն առավելապես չի աճում, մյուս կողմից՝ անձը չի փնտրում իր անհատականությանը համապատասխան մասնագիտությունը կամ զբաղմունքը:

«Ի՞նչ մասնագիտություն ընտրելե հարցրադրումն անխուսափելի է, որի պատասխանը փնտրում է յուրաքանչյուր մարդ իր տարիքային կամ սոցիալական զարգացման ինչ-որ մի փուլում: Հարցի լուծումը շատ կարևոր է ոչ միայն իր՝ անձի, այլև, ընդհանուր առմամբ, հասարակության համար:

Երեխաներն ընտրում են մասնագիտություն՝ առանց մասնագիտական խորհրդատվություն ստանալու՝ մեծամասամբ բավարարվելով ծնողների խորհրդով կամ հասարակական պահանջով:

Պրոֆեսիոնալ կամ մասնագիտական կողմնորոշումը ենթադրում է մանկավարժության և հոգեբանության շրջանակներից դուրս, առավել ընդգրկուն համալիր աշխատանքներ՝ ուղղված մասնագիտության ընտրությանը: Պլատոնը դեռ իր դարաշրջանում գրել է. «Ամեն առանձին անհատ պետք է զբաղվի այնպիսի մի բանով, ինչը պետք է պետությանը, և միևնույն ժամանակ նրանով, ինչին նա իր ամբողջ էությամբ ամենաշատն է համապատասխանումե: Այսպիսով՝ մոտ 2,5 հազարամյակ առաջ Պլատոնը նախանշել է այն, որ աշխատանքի և հասարակության զարգացման գործում անխուսափելի է անհատի գործունեության դերերի տարանջատումը:

Պրոֆեսիոնալ կողմնորոշումը փոխկապակցված բաղադրամասերից բաղկացած ամբողջական համակարգ է՝ համախմբված նպատակի ընդհանրությամբ և ղեկավարման միասնությամբ, պրոֆեսիոնալ կրթություն է, գործունեության տարբեր ձևերում և դպրոցականների հետաքրքրությունների, հակումների զարգացում, պրոֆեսիոնալ հոգեախտորոշում է, պրոֆեսիոնալ խորհրդատվություն, պրոֆեսիոնալ ադապտացիա և պրոֆեսիոնալ դաստիարակություն {25}:

Մասնագիտական կողմնորոշումը անհատի ընտրողական վերաբերմունքն է մասնագիտական աշխատանքին ամբողջապես, և ընտրած մասնագիտությանը մասնավորապես: Մասնագիտական կողմորոշման նախապայման է հանդիսանում համարժեք (ադեկվատ) ինքնագնահատականը, հուզական հասունացումը, ձևավորված ինտելեկտուալ կարողությունը: Հոգեբանության մեջ մասնագիտական կողմնորոշումը բաժանվում է որոշակի էտապների.

1.Մանկական խաղեր-որի ժամանակ երեխան իր համար ընտրում է ցանկացած մասնագիտության ինչ-որ դերակատարում և «խաղում էե այն համապատասխան վարքով:

2.Դեռահասության ֆանտազիա-որի ժամանակ դեռահասը տեսնում է իրեն դուր եկած մասնագիտության ներկայացուցիչ:

3.Պատանեկության տարիք-մասնագիտության նախնական ընտրություն: Գործունեության տարբեր տեսակները տեսակավորվում և գնահատվում են սկզբում պատանիների տեսանկյունից, հետո ունակությունների և վերջապես իր արժեքային համակարգի տեսանկյունից: Պատանին ավելի շատ զբաղվում է այն առարկայով, որը իրեն հետաքրքրում է, զարգացնում է իր ունակությունները հենց այդ ուղղությամբ, որի հաջող ընթացքն էլ ապահովում է նրա գործունեության հաջող իրականացումը:

4.Որոշումների ընդունում- սա ամիջականորեն կապված է մասնագիտության ընտրության հետ:

Յուրաքանչյուր մարդ իր կյանքում, ի թիվս այլ կարևոր որոշումների, կատարում է նաև մասնագիտության ընտրություն: Դեռ մանուկ հասակում՝ ավանդական ատամ հատիկի արարողության ժամանակ, ծնողներն ու հարազատներն անհամբեր սպասում են, թե շրջապատող առարկաներից երեխան ինչ ընտրությունն կկատարի՝ դրանով էլ պայմանավորելով նրա ապագա մասնագիտությունը կամ զբաղմունքը: Կամ շատ հաճախ ծնողներն իրենց անկատար երազանքների իրականացումը տեսնում են երեխաների մեջ՝ նրանց նախապես թելադրելով այս կամ այն ընտրությունը: Իրականում ամեն ինչ այդքան էլ հեշտ չէ: Մասնագիտության գիտակցված ընտրությունը, այն է՝ մասնագիտական կողմնորոշումը, երկարատև գործընթաց է, որը ենթադրում է մի կողմից անձի, մյուս կողմից աշխատաշուկայի վերլուծությունների համադրման արդյունքը:

Մասնագիտական կողմնորոշման համակարգի հիմնական նպատակն է անձի հետաքրքրություններին, կարիքներին և առանձնահատկություններին, ինչպես նաև աշխատաշուկայում որակավորված և մրցունակ կադրերի պահանջարկին առավելապես համապատասխանող մասնագիտական գործունեության ազատ և գիտակից ընտրության հնարավորության ստեղծումը:

Մասնագիտական կողմնորոշման միասնական համակարգի ստեղծումն ու զարգացումը ենթադրում է հետևյալ հիմնական խնդիրների համալիր լուծում.

1) մշտական փոփոխվող իրավիճակներում անձի՝ ինքնուրույն կողմնորոշվելու կարողությունների ձևավորում,
2) անձին իր ողջ կյանքի ընթացքում տեղեկատվության, խորհրդատվության, ինչպես նաև անհրաժեշտ այլ հնարավորությունների շարունակական տրամադրում՝ մասնագիտության կամ զբաղմունքի ընտրության, կարիերայի պլանավորման հարցերում,
3) մասնագիտական կողմնորոշման ենթակա անձի հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների, հակումների, հետաքրքրությունների և շարժառիթների բացահայտում,
4) մասնագիտական կողմնորոշում իրականացնող կազմակերպություններին և մասնագետներին անհրաժեշտ մեթոդական ապահովում:

Մասնագիտական կողմնորոշման իրականացման հիմնական սկզբունքներն են՝

1) մասնագիտական կողմնորոշման մատչելիության և կամավորության ապահովում սոցիալական բոլոր խմբերի համար,
2) մասնագիտական կողմնորոշման հարցերում ցանկացած տեսակի խտրականության բացառում,
3) կյանքի յուրաքանչյուր փուլի առանձնահատկություններից ելնելով՝ մասնագիտական կողմնորոշման ապահովում,
4) ուսման, կյանքի և աշխատանքի փոխադարձ կապի ապահովում,
6) անձի հետաքրքրությունների և հնարավորությունների առաջնահերթություն և մասնագիտական կողմնորոշման հումանիստական բնույթ,
6) մասնագիտության գիտակցված ընտրություն,

7) արդյունավետ զբաղվածության ապահովմանը միտված մասնագիտական կողմնորոշում,

8) սոցիալական գործընկերություն:

Մասնագիտական կողմնորոշման հարցերը հասարակական հետաքրքրություն են դարձել միայն 19-րդ դարի վերջերից: Այն խնդիրը, որ իր ունակությունններին համապատասխան մասնագիտություն և աշխատանք ընտրած անհատը ավելի մեծ օգուտ է բերում իրեն և հասարակությանը, հիմք է դարձել մասնագիտության ընտրության գիտական հիմնավորման անհրաժեշտության համար: Մի կողմից սա աշխատաշուկայի, զբաղմունքների և մասնագիտությունների ուսումնասիրությունն է, մյուս կողմից՝ երիտասարդների անհատականության, նրանց ցանկությունների, հակումների և ընդունակությունների ուսումնասիրման մեթոդների ստեղծումն ու կիրառումը:

Դպրոցականների պրոֆեսիոնալ կողմնորոշումը եղել և մնում է դպրոցի կարևոր խնդիրներից մեկը: Ոչ համակարգված պրոֆեսիոնալ խորհրդատվության արդյունքում կամ ընդհանրապես դրա բացակայության պայմաններում, շրջանավարտների պրոֆեսիոնալ ինքնորոշումը հաճախ տեղի է ունենում տարերայնորեն: Հիմնական հակասությունը կայանում է նրանում, որ չնայած նրան, որ պրոֆեսիոնալ կողմնորոշման հարցերը ուսումնասիրված են բավականին մանրամասն և գոյություն ունեն բավականինին շատ մեթոդիկաներ բացահայտելու այս կամ այն մասնագիտության համար անհրաժեշտ կարողությունները, հաճախ պրոֆեսիոնալ կողմնորոշման և պրոֆեսիոնալ խորհրդատվության աշխատանքները իրականացվում են անհրաժեշտ աշխատուժի պահանջներին անհապատասխան և չեն օժանդակում մասնագիտության ինքնուրույն ընտրության հմտությունների զարգացմանը: Այդ հակասությունը պայմանավորված է մանկավարժական պրակտիկայի անբավարար ապահովվածությամբ՝ նորմատիվային փաստաթղթերի, մեթոդական գրականության, պրոֆեսիոնալ կողմնորոշման աշխատանքների կոնկրետ փորձի փոխանակության պակասով:

Դպրոցականների մասնագիտական կողմնորոշման համար իրական հիմք պետք է ծառայեն դպրոցական բազմամասնագիտական կրթությունն ու դաստիարակությունը:

Դպրոցական երեխաների համար յուրաքանչյուր տարիքային խմբում մասնագիտական կողմնորոշման նպատակները տարբեր են՝

Տարրական դպրոցում՝ 1-4-րդ դասարաններ- մասնագիտությունների աշխարհի մասին պատկերացումների ձևավորում, մարդու կյանքում աշխատանքի դերերի մասին պատկերացում՝ տարբեր տեսակի գործողությունների ցուցադրման միջոցով,

Հիմնական դպրոցի առաջին փուլ՝ 5-7-րդ դասարաններ- մասնագիտության ընտրության հետ կապված հետաքրքրությունների և կարողությունների զարգացում,

Հիմնական դպրոցի երկրորդ փուլ՝ 8-9 դասարաններ- մասնագիտական մոտիվացիայի ձևավորում՝ հիմնական կարողություններն ու հակումներն ինքնուրույն վերլուծելու պատրաստվածության միջոցով,

Ավագ դպրոց՝ 10-12-րդ դասարաններ- ինքնորոշման արժեքային և իմաստային կողմերի ձևավորում, աշակերտների մասնագիտական պլանավորման և նախընտրությունների պարզում, ընդունակությունների և կարողությունների զարգացում՝ մասնագիտական հոսքերում առանձին առարկաների առավել խորն ուսումնասիրման միջոցով:

Դպրոցական փուլերով չի սահմանափակվում մասնագիտական կողմնորոշման գործընթացը: Այն առավել լայն նկարագիր է ստանում արդեն իր կարիերայի պլանավորման և զարգացման հաջորդ փուլերում՝ քոլեջում, բուհում ուսումնառության շրջանում, մասնագիտություն և որակավորում ստանալուց հետո, աշխատանք փնտրելիս, առաջին աշխատանքը կատարելիս և/կամ մասնագիտությունը փոխելու ճանապարհին: Կարճ ասած, սա գործընթաց է ողջ կյանքի ընթացքում:

Կարելի է փաստել, որ մասնագիտության գիտակցված ընտրությունը եռակողմ գործոնների համակցում է՝

- Անձնային որակների և նախասիրությունների բացահայտում:
- ՀՀ աշխատաշուկայի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում:
- ՀՀ կրթական համակարգի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում:

Ներկա ժամանակաժրջանի տնտեսական և քաղաքական անկայուն վիճակը մարդուն ստիպում է ապավինել միայն իր սեփական ուժերին, լինել շարժուն և ճկուն, ընդունակ արագ և ճիշտ կողմնորոշվելու ցանկացած մասնագիտության ընդհանուր

բնույթում և որոշել իր պիտանելիությունը տվյալ մասնագիտությանը: Պրոֆեսիոնալ գործունեության բովանդակության չիմացությունը և համապատասխանաբար անբավարարվածությունը ձեռքբերված մասնագտությունից իր հերթին հանդիսանում է մասնագետների անկայունության, ցածր արտադրողականության, աշխատանքային գործունեության փոփոխման պատճառներից մեկը:

Ինչպես վկայում են միջազգային փորձի ուսումնասիրությունները՝ գործնականում մասնագիտական կողմնորոշման համակարգի միասնական մոդել գոյություն չունի: Յուրաքանչյուր երկիր, ելնելով սոցիալ-տնտեսական և պատմական զարգացման սեփական առանձնահատկություններից, աշխատաշուկայի և կրթական համակարգի վիճակից ու պահանջներից, ստեղծում և զարգացնում է մասնագիտական կողմնորոշման իր ուրույն ազգային համակարգը: Ավելին, զարգացման ներկա փուլում այդ համակարգերը գտնվում են ակտիվ փոփոխությունների գործընթացներում՝ հստակ ուղղորդվելով դեպի աշխատաշուկա և կրթական համակարգ:

Ֆրանսիայում մասնագիտական կողմնորոշման գործընթացները ենթարկվում են օրենսդրական կոշտ կարգավորման: Մասնագիտական կողմնորոշումն իրականացվում է զրույցների ձևով յուրաքանչյուր ուսումնական հաստատությունում՝ այդ հաստատության ներկայացուցիչների, սովորողների և նրանց ծնողների մասնակցությամբ: Ֆրանսիական մոդելն ունի երկու կարևոր առանձնահատկություն՝ մասնագիտական կողմնորոշման մանկավարժական ուղղվածություն և տեղեկատվական ուղղվածություն:

Մեծ Բրիտանիայում մասնագիտական կողմնորոշման հիմնական խնդիրը ոչ միայն սովորողներին մասնագիտության ընտրության հարցում աջակցելն է, այլև սեփական կարողություններն ու հնարավորությունները աշխատաշուկայի ընթացիկ և հեռանկարային կարիքների ու պահանջմունքների համատեքստում գնահատել սովորեցնելը: Երկրում մեծ ուշադրություն է դարձվում մասնագիտության ընտրության հարցում սովորողների ինքնուրույնությունը բարձրացնելուն: Առանձնահատկություն է համարվում մասնագիտական կողմնորոշման կազմակերպումը երկխոսության միջոցով՝ օգտագործելով հոգեբանական տարբեր մեթոդներ: Կարևոր տեղ է հատկացված պրակտիկային, որի ընթացքում ձևավորվում են սոցիալական և

աշխատանքային տարբեր իրավիճակներ՝ աշխատանքային օրվա պլանավորում, աշխատանքային հարաբերություններում սեփական ոճի մշակում, վարքագիծը՝ աշխատանքը կորցնելիս, ընտանեկան և աշխատանքային կյանքի խելամիտ համակցում: Ուսումնական գործընթացներում պրակտիկան արդյունավետորեն կազմակերպելու նպատակով կրթական հաստատություններում ստեղծվում են փոքր մոդելային արտադրամասեր, որոնք սովորողներին հնարավորություն են տալիս դրսևորել սեփական հետաքրքրությունները, նախասիրությունները, ինչպես նաև գործարար հմտություններ ձեռք բերել փոքր բիզնեսում, դրսևորելով նախաձեռնողականություն և պատասխանատվություն կյանքի ու աշխատանքի տարբեր իրավիճակներում՝ հենվել սեփական անձի վրա:

Գերմանիայում մասնագիտական կողմնորոշումն իրականացվում է հարցումների, թեստավորման և խորհրդատվությունների, ծնողական կազմակերպությունների հետ համատեղ անցկացվող միջոցառումների շնորհիվ: Առանձնահատկությունն է համարվում այն, որ յուրաքանչյուր երեխա լրացնում է աշխատանքային օրագիրը, որտեղ ընդհանուր տեղեկատվություն է տրվում ընտանիքի, անձնական հետաքրքրությունների և հակումների, մասնագիտական ձգտումների, մասնագիտության նախնական ընտրության վերաբերյալ:

Ներկայումս ԱՄՆ-ում մասնագիտական կողմնորոշման համակարգի հիմնական խնդիր է համարվում աշխատաշուկայում անձի մրցունակության, ճկունության և կարիերայի հետևողական աճի ապահովումը նրա ողջ կյանքի ընթացքում:

Մասնագիտական կողմնորոշման բավականին ուսանելի փորձ ունի Կանադան: Մասնագիտական կողմնորոշման գործընթացների հիմքում ընկած է աշխատաշուկայի իրական պահանջարկը՝ քանակական և որակական առումներով: Մասնագիտական կողմնորոշման ինստիտուցիոնալ-կազմակերպական առանցքային օղակ են համարվում մասնագիտական կողմնորոշման ծառայություններ մատուցող հատուկ մասնագիտացված կենտրոնները՝ երկրի ողջ տարածքում: Այս կենտրոններն ունեն տեխնիկական, տեխնոլոգիական և տեղեկատվական զինվածության բարձր մակարդակ, ինչը կենտրոնների մատուցած ծառայություններից օգտվողներին օբյեկտիվ հնարավորություն է տալիս ստանալ մասնագիտական անհրաժեշտ և ամբողջական կողմնորոշում շուրջ 4000 առանձին մասնագիտության գծով:

Ճապոնիայում մասնագիտական կողմնորոշման կազմակերպումը առավելապես պայմանավորված է կրթական համակարգի առանձնահատկություններով: Իսկ կրթության հիմնական նպատակներից մեկը կրթություն ստացողին հետագա կարիերային նախապատրաստելն է և դրա հետագա առաջընթացի օբյեկտիվ հիմքերի ձևավորումը:

Միջազգային փորձը վկայում է, որ մասնագիտական կողմնորոշման արդյունավետ համակարգի ձեւավորման ու զարգացման գործընթացներում առանցքային դեր ունեն ինչպես պետական մարմինները, այնպես էլ հասարակության մյուս շահագրգիռ կողմերն ու սոցիալական գործընկերները: Միայն պետության վրա հույս դնելը՝ առանց տարբեր շահագրգիռ կողմերի, մասնագիտական կողմնորոշման համակարգը կդարձնի անկայուն եւ սահմանափակ՝ աճող ծախսերի, ցածր արդյունավետության եւ որակի, շահառուների հետ ոչ բավարար հետադարձ կապի առումներով:

Ելնելով վերը շարադրվածից՝ կարելի է անել հետևյալ ընդհանրական եզրահանգումը. տնտեսապես զարգացած երկրներում մեծ ուշադրություն է դարձվում սովորողների մասնագիտական կողմնորոշմանը, անձի մասնագիտության ընտրությանը զուգահեռ առաջնահերթություններ են համարվում ինքնուրույնության ձևավորումը, սեփական կարողությունների և հնարավորությունների գնահատումը աշխատաշուկայում, մրցունակության և ճկունության հետևողական ձգտումը:

Հետխորհրդային երկրներում մասնագիտական կողմնորոշման գործընթացները դեռևս կրում են խորհրդային սոցիալ-տնտեսական համակարգից ժառանգած հիմնական հատկանիշները: Մյուս կողմից՝ այս երկրների սոցիալ-տնտեսական տարբեր ոլորտներում տեղի ունեցող անցումային բարեփոխումները որոշակի ազդեցություն են թողնում նաև մասնագիտական կողմնորոշման ազգային համակարգերի ձևավորման գործընթացների վրա:

Չնայած մասնագիտական կողմնորոշման ազգային համակարգերի ստեղծման և գործարկման ուղղությամբ անցումային երկրներում ձեռնարկվող բազմակողմանի միջոցառումներին՝ դեռևս այդ երկրներում գործուն և արդյունավետ համակարգեր չեն ներդրվել:

Հայաստանում մասնագիտական կողմնորոշման գործուն և կայացած համակարգ երբևէ չի եղել, թերևս՝ միայն խորհրդային տարիներին գործող համակարգը, որն ավելի շատ իմիտացիոն, ձևական բնույթ ուներ, հիմնականում՝ ճանաչողական, խիստ գաղափարականացված էր և քիչ եզրեր ուներ աշխատաշուկայի հետ:

Հանրակրթության ոլորտում իրականացվող շարունակական և լայնածավալ բարեփոխումները, ի թիվս այլ նպատակների, միտված են նաև ապահովելու շրջանավարտների՝ աշխատաշուկա մտնելու պատրաստվածությունը և իրենց հակումներին ու ընդունակություններին համապատասխան մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունը: Սակայն գործնականում այդ ուղղությամբ բավարար աշխատանքներ չեն կատարվում: Կրթական ծրագրերով նախատեսված չեն դասընթացներ, որոնք աշակերտներին կուղղորդեն դեպի աշխատաշուկա, նրանց կօժտեն կարիերայում հաջողություններ ունենալու համար անհրաժեշտ նախնական կարողություններով:

Որոշ մասնագիտական ուսումնական հաստատություններում վերջին տարիներին ստեղծվել են կարիերայի կենտրոններ, սակայն դրանք կարիք ունեն արդյունավետ մեթոդական ապահովման, ինչպես նաև աշխատաշուկայի, կարիերայի պլանավորման վերաբերյալ արդիական տեղեկատվության:

2007 թվականի հոկտեմբերին Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում ստեղծվեց «Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոնե (ԵՄԿԿ) ՊՈԱԿ-ը, որի գործունեության հիմնական նպատակներից է դպրոցականներին դեպի աշխատաշուկա ուղղորդելը՝ բացահայտելով նրանց անհատական առանձնահատկություններն ու նախասիրությունները, և աջակցել աշխատաշուկայում երիտասարդների մրցունակության բարձրացմանն ու առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործելուն:

2007-2010թթ. ժամանակահատվածում երիտասարդների մասնագիտական կողմնորոշման որոշակի գործառույթներ են իրականացվել Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության

«Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոնե ՊՈԱԿ-ի մարզային երիտասարդական կենտրոնների կողմից:

Մասնագիտական կողմնորոշման գործընթացում շահառուների թիրախավորումը պայմանավորված է յուրաքանչյուր տարիքային խմբի առանձնահատկություններով, սոցիալական կարգավիճակով և անձի նախասիրություններով:

Շահառուների հիմնական խմբում են՝

1) դպրոցականները՝ ընդգրկելով տարրական, միջին և ավագ դպրոցները, որտեղից սկսվում են անձի բացահայտմանն ու մասնագիտությունների աշխարհում ճանաչողության բարձրացմանն ուղղված աշխատանքները,
2) ուսանողները, որոնք կարիք ունեն տեղեկատվության և խորհրդատվության՝ իրենց ուսումնառությունը շարունակելու, մասնագիտական կարողությունները զարգացնելու, կարիերան պլանավորելու, ձեռնարկատիրական գործունեություն սկսելու կամ աշխատանք փնտրելու գործում,
3) պարտադիր ուսուցումից դուրս մնացած կամ 16-25 տարեկան այն երիտասարդները, որոնք չունեն միջնակարգ կամ լրիվ կրթության ատեստատ կամ հեռացել են մասնագիտական ուսումնական հաստատությունից՝ առանց մասնագիտական որակավորման,
4) աշխատանք փնտրողները, գործազուրկները, այդ թվում՝ աշխատաշուկայում անմրցունակ անձինք և վերադարձող միգրանտները,
5) աշխատանքը կորցնելու ռիսկ, վերամասնագիտացման կարիք և ցանկություն ունեցող անձինք,
6) անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների 16-18 տարեկան երիտասարդները,
7) պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվող երիտասարդները,
8) սկսնակ գործարարները:

Որպես շահագրգիռ կողմ հանդես են գալիս երեխաների և երիտասարդների հետ աշխատող մասնագետները, մանկավարժներն ու ծնողները, որոնք պետք է տեղեկացված լինեն անձին բացահայտելու և զարգացնելու, մասնագիտական կրթությունը և ուսուցումը շարունակելու, աշխատաշուկայի պահանջների, աշխատանք

փնտրելու բոլոր հնարավորությունների մասին՝ նպատակ ունենալով օգնել անձին գիտակցված կատարելու ապագա մասնագիտության և կարիերայի ընտրությունը:

Այս խմբի մեջ են դիտարկվում նաև գործատուները, որոնք որպես սոցիալական պատասխանատվություն կրողներ՝ ներգրավված լինելով մասնագիտական կողմնորոշման գործընթացներում՝ մասնակցում են ապագա մրցունակ կադրերի ձևավորմանը:

Այս ենթագլխում կներկայացնենք այն հիմնական հասկացությունները և մեթոդներ, որոնք առընչվում են մասնագտիական կողմնորոշմանը և ընտրությանը:

Մասնագիտական կողմնորոշումը գործառույթ է, որի նպատակն է անձին տրամադրել համակարգված տեղեկատվություն աշխատաշուկայի առկա իրավիճակի և զարգացման միտումների, կրթական համակարգի ընձեռած հնարավորությունների, մասնագիտությունների, անձնային որակների և հակումների վերաբերյալ՝ նրան հնարավորություն ընձեռելով կայացնել գիտակցված և արդյունավետ որոշում: Կարիերան կյանքի ընթացքում մարդու ստանձնած աշխատանքային դերերի հաջորդականությունն ու բազմազանությունն է: Առավել լայն իմաստով այն ընդգրկում է կյանքի դերերը, ազատ ժամանցի գործունեությունը, ուսումնառությունը և աշխատանքը:

Կարիերայի ուղղորդումը համակարգված գործառույթ է, որի նպատակն է ուղղորդման սուբյեկտին օգնել շարունակական ինքնազարգացման և ինքնակատարելագործման միջոցով բարձրացնել մրցունակությունը աշխատաշուկայում և ունենալ համակարգված շարունակական առաջընթաց ողջ աշխատանքային գործունեության ընթացքում:

Մասնագիտական ինքնորոշման էությունը կայանում է ընտրված մասնագիտության, զբաղմունքի, աշխատանքի շրջանակներում անձնական հետաքրքրության և իմաստի, փնտրման և այն գտնելու մեջ:

Մասնագիտական ինքնագիտակցությունը մարդու ինքնագիտակցությունն է, որի համար որոշակի աշխատանքային գործունեությունը հանդիսանում է միջոց՝ որպես կայացած անձ սեփական արժանապատվությունը հաստատելու համար:

Մասնագիտությունը (լատիներեն *professio*, նշանակում է՝ «հայտարարում եմ իմ գործը) մարդու աշխատանքային գործունեության տեսակ է, որը պահանջում է որո-

շակի պատրաստվածություն և հանդիսանում է մարդու գոյատևման աղբյուր: Մասնագիտությունները տարանջատվում են կատարվող աշխատանքների բնույթով և պարունակությամբ, ինչպես նաև՝ աշխատանքային գործիքների կիրառմամբ:

Մասնագիտացումը (լատիներեն *specialis*, նշանակում է՝ «հատուկ, յուրահատուկ») հատուկ պատրաստվածության և աշխատանքային փորձի վրա հիմնված գիտելիքների, կարողությունների և հմտությունների համակարգ է, որն անհրաժեշտ է կոնկրետ գործունեության տեսակի համար այս կամ այն մասնագիտության շրջանակներում: Այսպիսով՝ մասնագիտացումը աշխատանքային գործունեության տարանջատումն է մասնագիտության շրջանակներում:

Զբաղմունքը աշխատանք է, որով անձն զբաղվում է տվյալ պահին, և որը նրա համար հանդիսանում է եկամուտի հիմնական աղբյուր: Ի դեպ, զբաղմունքը կարող է համընկնել մասնագիտության հետ:

Մասնագիտական կողմնորոշման ծառայությունների շրջանակը

Մասնագիտական կողմնորոշման իրականացման սկզբունքները պայմանավորված են անձի կարիքներով: Այդ կարիքներից է բխում մասնագիտական կողմնորոշման իրականացման կոնկրետ մեթոդի կիրառումը: Նշենք, որ ամեն մեթոդ ունի աշխատանքի իր սկզբունքները: Ստորև ներկայացվում են հիմնական մեթոդները.

1. **Մասնագիտական իրազեկում**. այն ներառում է մասնագիտությունների և զբաղմունքների աշխարհի, աշխատաշուկայի, կրթություն և ուսուցում ստանալու հնարավորությունների և պայմանների մասին տեղեկատվության տարածումը:
2. **Մասնագիտական հետազոտումը** մասնագիտական կողմնորոշման ծառայություններ մատուցելու նպատակով անձի ուսումնասիրումն է: Այս գործընթացում հետազոտվում են անձի բնավորության առանձնահատկությունները, կարիքները, արժեքային կողմնորոշիչները, հետաքրքրությունները, ընդունակությունները, մասնագիտական նախնական ուղղորդվածությունը:
3. **Մասնագիտական խորհրդատվությունը** նպատակ ունի բացահայտել անձի անհատական առանձնահատկությունների և այս կամ այն զբաղմունքի/մասնագիտության պահանջների համապատասխանությունը: Խորհրդատվությունը կարող է անցկացվել խմբային կամ անհատական ձևով՝ եթե նախապատրաստական կամ հիմնական փուլերն են, սակայն ավարտական

փուլում այն պետք է լինի անհատական զրույցի ձևով, հնարավոր է՝ ծնող(ներ)ի մասնակցությամբ: Մասնագիտական խորհրդատվությունը կարող է ունենալ տեղեկատվական և հոգեբանամանկավարժական բնույթ: Արդյունքում դպրոցականը պետք է սպառիչ պատասխաններ ստանա իրեն հետաքրքրող մասնագիտության, այդ մասնագիտությամբ կրթություն և ուսուցում ստանալու հնարավորությունների վերաբերյալ: Որպես այս մեթոդի արդյունավետության ապահովում՝ կարիք կլինի աշխատանքը շարունակել այլ մեթոդներով՝ այցելություններ տարբեր աշխատատեղեր, հանդիպումներ տարբեր մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների և դասախոսների հետ, մասնակցություն մասնագիտական կողմնորոշման նպատակով կազմակերպած միջոցառումների, հանդիպումների և այլն: Այս փուլում, արդեն ընդհանրացնելով մասնագիտական նախնական ախտորոշման և տեղեկատվության արդյունքների հիման վրա ստեղծված պատկերացումները, ամեն մի կոնկրետ անձի պետք է տրվի մասնագիտական խորհրդատվական եզրակացություն:

4. **Մասնագիտական ընտրություն** մեթոդի նպատակն է բացահայտել մարդու հարմարվողականությունը կոնկրետ աշխատանքին, զբաղմունքին: Այս աշխատանքները, որպես կանոն, իրականացվում են դպրոցից դուրս՝ հատուկ լաբորատորիաներում կամ գործատուի մոտ՝ ձեռնարկություններում, որտեղ, ըստ մասնագիտությունների, ստեղծված են հատուկ հարմարություններ:

5. Պետք է տարբերակել մասնագիտության ընտրությունը մասնագիտությունների ընտրությունից: Թվում է, թե նույնական են, սակայն մեթոդիկայով դրանք իրարից շատ են տարբերվում. մասնագիտության ընտրության դեպքում ընտրում են տվյալ մասնագիտությանն առավել համապատասխանող անձին, իսկ մասնագիտությունների ընտրության ժամանակ խոսքը գնում է անհատի անձնային առանձնահատկություններին համապատասխան մասնագիտության ընտրության մասին, այսինքն՝ մեթոդը ենթադրում է անձից անցում դեպի մասնագիտությանը:

6. **Սոցիալ-մասնագիտական հարմարեցման** փուլում ակտիվ գործընթացների միջոցով իրականացվում է երիտասարդի հարմարեցում նոր սոցիալական միջավայրին, աշխատանքի պայմաններին և կոնկրետ մասնագիտությանը: Մասնագիտական հարմարեցման փուլի հաջողությունը մասնագիտության ճիշտ

ընտրության, մասնագիտական կողմնորոշման աշխատանքների արդյունավետության գնահատման գլխավոր չափանիշներից մեկն է:

7. **Մասնագիտական դաստիարակության** նպատակն է մարդկանց մոտ ձևավորել պատասխանատվության, պարտավորվածության զգացում, ինքնուրույն որոշում կայացնելու, ընտրություն անելու կարողություններ:

I.2 Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կողմնորոշման համակարգի առաջարկվող մոդելը

Ո՞րն է Հայաստանում մասնագիտական կողմնորոշման համակարգի մոդելը: Առաջարկվում է մասնագիտական կողմնորոշման այնպիսի մոդել, որի առանցքային հենքը կազմելու է ամբողջ կյանքի ընթացքում տարիքային տարբեր խմբերում եւ սոցիալ-աշխատանքային տարբեր իրավիճակներում գտնվող անձանց համար մասնագիտության արդյունավետ ընտրության, փոփոխության եւ կարիերայի շարունակական զարգացման հնարավորությունների ապահովումը՝ նկատի ունենալով մարդու անձնային հատկանիշները, ինչպես նաեւ աշխատաշուկայի պահանջարկի փոփոխվող իրավիճակը: Մասնագիտական կողմնորոշման գործընթացներում անմիջականորեն պետք է մասնակցեն էկոնոմիկայի, առողջապահության, սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարությունները, ինչպեսեւ սոցիալական գործընկերներն ու քաղաքացիական հասարակության շահագրգիռ մյուս կողմերը:

Մեր երկրում մասնագիտական կողմնորոշման ամբողջական եւ գործուն համակարգ դեռ չի ձեւավորվել: Անհրաժեշտ մեթոդաբանության եւ մեխանիզմների բացակայությունը, ռեսուրսների սահմանափակվածությունը չեն ապահովում երիտասարդների մասնագիտական կողմնորոշման գործառույթի արդյունավետ, համակարգված եւ ամբողջական իրականացման համար պայմաններ: Իրավիճակը շտկելու համար ՀՀ կառավարությունը արդեն հաստատել է մասնագիտական կողմնորոշման համակարգի զարգացման հայեցակարգը եւ դրա իրականացման 2012—2015թթ. միջոցառումների ծրագիրը («մասնագիտական կողմնորոշումե ասվածը շատ երկրներում փոխարինվում է «կարիերայի ուղղորդումե հասկացությամբ):

Ինչո՞ւ է առաջացել մասնագիտական կողմնորոշման համար առանձին հայեցակարգի ընդունման անհրաժեշտությունը, ի՞նչ վիճակ է ոլորտում, ի՞նչ լուծումներ են առաջարկվում: Ըստ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանի, պայմանավորված ազատ շուկայական հարաբերություններով՝ սկզբունքորեն փոխվել են աշխատանքային հարաբերությունների բնույթը, աշխատաշուկայի կարգավորման սկզբունքներն ու մեխանիզմները, աշխատաշուկայում պահանջարկի եւ առաջարկի ձեւավորման օրինաչափությունները: Մասնագիտությունների ու զբաղ-

մունքների ոլորտը դարձել է առավել շարժուն, բազմագործոն եւ դժվար կանխատեսելի, արդյունավետ չի գործում մասնագետների պատրաստման պետպատվերի համակարգը, ինչի հետևանքով Հայաստանի աշխատաշուկայում առկա է որակական եւ քանակական քրոնիկ անհավասարակշռություն, որն արտահայտվում է գործազրկության բարձր իրական մակարդակով, որոշ մասնագիտությունների գծով՝ կադրերի գերարտադրությամբ եւ որոշ դեպքերում՝ պահանջարկ ունեցող մասնագետների պակասուրդով: Թույլ է աշխատաշուկայի եւ կրթական համակարգի փոխադարձ կապը: Այս համատեքստում, որպես բնակչության զբաղվածության, աշխատաշուկայի արդյունավետ հավասարակշռության երկարաժամկետ ապահովման հեռանկարային միջոց, մեծ նշանակություն է ստանում մասնագիտական կողմնորոշումը, որը պետք է հիմնված լինի անհատի մասնագիտական նախընտրությունների ձեւավորման հիմնական գործոնների ամբողջության ու դրանք իրականացնելու ուղիների բազմակողմանի հաշվառման վրա:

Հայաստանի անկախացումից հետո երկրում տեղի ունեցած համակարգային փոփոխությունների շնորհիվ ձեւավորվող շուկայական հարաբերությունները, առողջապահության, կրթության, սոցիալական պաշտպանության, մշակույթի ու հոգեւոր ոլորտներում գաղափարախոսական նոր մոտեցումներն ու գործելակերպը էապես խաթարեցին նաեւ մասնագիտական կողմնորոշման խորհրդային համակարգը: Հին համակարգը դադարեց գործելուց, իսկ նորը, որպես այդպիսին, չստեղծվեց: Փաստորեն, և՛ խորհրդային տարիներին, և՛ Հայաստանի նորանկախ պետության ժամանակներում պատանիների ու երիտասարդների կողմից մասնագիտության ու զբաղմունքի ընտրությունը կրել է խիստ տարերային, հախուռն բնույթ՝ հիմնականում պայմանավորված լինելով մի շարք հանգամանքներով: Որպես կանոն, ընտանիքներում երեխաների մասնագիտության ընտրության հարցում վճռորոշ է եղել ընտանիքի ավագների, մասնավորապես՝ ծնողների կարծիքը, ովքեր առանձին դեպքերում առաջնորդվել են սեփական նախասիրություններով, առկա նյութական հնարավորություններով կամ տուրք են տվել նորաձևությանը: Որոշակի նշանակություն է ունեցել նաեւ ծնողների մասնագիտական ավանդույթները շարունակելը՝ պայմանավորված գենետիկ հակումներով: Դեր է ունեցել շրջապատի,

ընկերների կարծիքները: Քիչ տեղ է մնացել մասնագիտության գիտակցված ընտրությանը: Մասնագիտական կողմնորոշման իրավական կարգավորմանն առնչվող որոշ դրույթներ ներառված են միայն «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասինե և «Բնակչության զբաղվածության եւ գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասինե օրենքներում: Գործնականում, լայն իմաստով, մասնագիտական կողմնորոշման գործառույթը հիմնականում սահմանափակված է աշխատանք փնտրողներին աշխատաշուկայի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելով, որն իրականացնում են «Զբաղվածության պետական ծառայությունե գործակալության զբաղվածության տարածքային կենտրոնները: Հանրակրթության ոլորտում փոփոխությունները միտված են նաև ապահովելու շրջանավարտների՝ աշխատաշուկա մտնելու պատրաստվածությունը եւ իրենց հակումներին ու ընդունակություններին համապատասխան մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունը: Սակայն գործնականում այդ ուղղությամբ բավարար աշխատանքներ չեն կատարվում: Կրթական ծրագրերով նախատեսված չեն դասընթացներ, որոնք աշակերտներին կուղղորդեն դեպի աշխատաշուկա, նրանց կօժտեն կարիերայում հաջողություններ ունենալու համար անհրաժեշտ նախնական կարողություններով:

Երիտասարդության 2008 թվականի ազգային զեկույցի տվյալներով՝ երիտասարդների 75.5 %-ը չի փնտրել աշխատանք, իսկ 56%-ը չի աշխատել իր մասնագիտությամբ: Նաև այս տվյալներով մտահոգված Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոնը վարչապետին է ներկայացրել ոլորտում առկա խնդիրները: Առաջարկվել է մշակել մասնագիտական կողմնորոշման քաղաքականություն, որը կսկի գործել հանրակրթական դպրոցի առաջին դասարանից:

Պատանիների համար կարևոր են նրանց մասնագիտական կողմնորոշումը, որն էլ հանդիսանում է հասունության ցուցանիշ: Նրանք հակված են իրենց կարծելու ավելի քիչ շփվող, կենսախինդ, քան իրենց հասակակիցները, իրենց են վերագրում բարությունը և մյուս մարդկանց հասկանալու կարողությունը:

Աղջիկները իրենց կարծիքով ավելի անկեղծ, հավատարիմ և ճշմարիտ են: Նրանք իրենց հասունացման գիտակցման համար ավելի քիչ են կարևորություն տա-

լիս մասնագիտական կողմնորոշմանը, քանի որ նրանց համար կարևոր է ընտանիքը, միջանձնային հարաբերությունները:

Մասնագիտական կողմնորոշման խնդիրը առավել քան կարևորվում է մարզերում ապրող երիտասարդների համար: Ինչպես վկայում է պաշտոնական վիճակագրությունը, մի կողմից՝ մարզերում թափուր աշխատատեղերը շատ հաճախ չեն համալրվում մասնագետներ չլինելու պատճառով, մյուս կողմից՝ երիտասարդների շրջանում արձանագրվում են գործազրկության միջինից բարձր ցուցանիշներ: Միաժամանակ, գործատուները, որպես շահագրգիռ կողմ, այս փուլում գրեթե ներգրավված չեն մասնագիտական կողմնորոշման գործընթացներին:

Միաժամանակ, գործատուները, որպես շահագրգիռ կողմ, այս փուլում գրեթե ներգրավված չեն մասնագիտական կողմնորոշման գործընթացներին:

Մասնագիտական կողմնորոշման համակարգի նպատակն ու խնդիրներն իրագործելու համար առաջարկվում է մասնագիտական կողմնորոշման այնպիսի մոդել, որի առանցքային հենքը կազմելու է ողջ կյանքի ընթացքում տարիքային տարբեր խմբերում և սոցիալ-աշխատանքային տարբեր իրավիճակներում գտնվող անձանց համար մասնագիտության արդյունավետ ընտրության, փոփոխության և կարիերայի շարունակական զարգացման հնարավորությունների ապահովումը՝ նկատի ունենալով մարդու անձնային հատկանիշները, ինչպես նաև աշխատաշուկայի պահանջարկի փոփոխվող իրավիճակը:

Մասնագիտական կողմնորոշումը հանրակրթական ուսումնական հաստատություններում պետք է իրականացվեն համապատասխան ուսումնական ծրագրով, որը պետք է մշակվի և հաստատվի պատասխանատու շահագրգիռ կողմերի ակտիվ մասնակցությամբ:

Մասնագիտական կողմնորոշման հիմնական աշխատանքները կատարվում են հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալի, սոցիալական մանկավարժի, հոգեբանի, դասղեկների կողմից: Այդ աշխատանքների համակարգման գործառույթները կարող են վերապահվել նրանց: Մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ են տարվելու նաև առարկայական դասաժամերի հաշվին՝ համապատասխան ուսուցիչների կողմից:

I.3 Մասնագիտության ընտրությունը որպես անձի կայացման գործոն

Որևէ մասնագիտություն ընտրելիս՝ մենք ցանկանում ենք, որ այն համապատասխանի մեր խառնվածքին, ձանձրալի չլինի, չհակասի մեր աշխարհայացքին և կյանքի սկզբունքներին: Կան բազմաթիվ թեստեր, որոնք նախատեսված են մասնագիտական կողմնորոշման և ընտրության համար: Երբեմն հարց է առաջանում, թե որքանով է մասնագիտությունը ազդում տվյալ անձի խառնվածքի վրա: Խառնվածքի գծերը ավելի կայուն են և կյանքի ընթացքում չեն փոխվում, քանի որ հոգեբանները նշում են դրանց գենետիկական պայմանավորվածությունը, իսկ բնավորությունը կարող է փոխվել միջավայրի ազդեցության, դաստիարակության, կյանքի պայմանների փոփոխության հետևանքով: Դրա համար պատահական չէ, որ ծույլ և խուլիգանի պիտակը կրող աշակերտը դառնում է հզոր ֆիրմայի ղեկավար կամ ոչնչով աչքի չընկնող երեխան հետագայում լավ կարիերա է ստեղծում: Սակայն խելացի ուսուցիչը գիտի, որ մեծահասակների մոտ փոփոխություններն ավելի դժվար են տեղի ունենում: Դրա համար պետք է խելացի գտնվել և երեխաների մոտ փոքր տարիքից դաստիարակել հետաքրքրասիրությունը, աշխատասիրությունը, կամքի ուժ, նպատակաուղղվածություն: Սակայն կյանքի ընթացքում բոլորն էլ փոխվում են, աշխատանքի են անցնում և ձեռք են բերում որոշ սովորույթներ: Եվ աստիճանաբար այդ սովորությունները սկսում են ազդել իրեց կյանքի և կենցաղի տարբեր ասպեկտների վրա:

Շատերի վրա խոր ազդեցություն են թողնում իրենց ուսուցիչները, որոնք կարողանում են հետաքրքիր ձևով մատուցել այդ առարկան և երեխան կողմնորոշվում է հենց այդ ուղղությամբ: Շատերը մասնագիտական ընտրություն են կատարում ծնողների ցանկությամբ, նրանց պահանջով: Կան ընտանիքներ, որտեղ մասնագիտությունները փոխանցվում են սերընդեսերունդ, իսկ ոմանք էլ իրենց կյանքում ապրած սթրեսից կամ ինչ-որ փոփոխությունից հետո ընտրում են կոնկրետ որևէ մասնագիտություն: